ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքապետարանի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-109/25 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի մասին նիստի

Ք. Ապարան

31.10.2025թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Հրայր Մկրտչյան –համայնքի ղեկավարի տեղակալ(ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝
Վեներա Խաչատրյան – աշխատակազմի գլխավոր մասնագետ (ԳԱ)
Վարդան Արմենակյան - տնտեսվար (ԳԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝
Մարիամ Հայրապետյան

1. ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-109/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.1 Մասնակցիների ներկայացրած հայտերի գնահատում
1.2. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-109/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-109/25 ծածկագրով ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունը.

Տիգրան Պողոսյան ԱՁ -ի ներկայացրած հայտում բացակայում է ընթացակարգի դիմում հայտարարությունը ստորագրած անձին տրված լիազորագիրը:

2.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղարը նույն օրը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցեց **Տիգրան Պողոսյան ԱՁ-ին** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

2.3 Հաշվի առնելով, որ էլեկտրոնային աճուրդ համակարգը երկրորդ և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին շտկման հնարարավորություն չի ընձեռում գնահատող հանձնաժողովը որոշեց չդիտարկել նշված տեղերը զբաղեցրած մասնակիցների հայտերը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Մկրտչյան
հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Խաչատրյան
_____ Վ. Արմենակյան

Հանձնաժողովի ıրտուղար ՝ _____ Մ. Հայրապետյան